«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ,
ոստիկանության գեներալ-մայոր
_____ Մ. Բաբայան
«___» _____ 2020 թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի՝ Թամարա Զավենի Գրիգորյանի՝ «Հարկային ծառայության մարմինների և հարկ վճարողների իրավասուբյեկտության հիմնախնդիրները» թեմայով ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնը, մասնակցությամբ՝ իրավաբանական գիտությունների թեկնածու Ռ. Ռ. Մարանդյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Վ. Հ. Սայադյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Ա. Ադամյանի, Ա. Գ. Սաֆարյանի, Ա. Ս. Մարգարյանի և Մ. Բ. Մանուկյանի, քննարկեց Թամարա Զավենի Գրիգորյանի՝ «Հարկային ծառայության մարմինների և հարկ վճարողների իրավասուբյեկտության հիմնախնդիրները» թեմայով ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց հետևյալին:

Ատենախոսության արդիականությունը կասկած չի հարուցում: Ժամանակակից գլոբալացման միտումները, միջազգային և ազգային հանրային շահերի փոփոխությունը պահանջում են արմատական բարեփոխումներ նաև հարկային համակարգում և հարկային մարմինների գործառույթներում, հարկային ծառայողի (ծառայության) և հարկ վճարողի հարկահիրավական հարաբերություններում, հարկ վճարող կազմակերպությունների և ֆիզիկական անձանց, հարկային գործակալների,

ինչպես նաև՝ հարկային հարաբերությունների մյուս մասնակիցների իրավական կարգավիճակի կանոնակարգման ոլորտներում: Ընդ որում, նշված գործընթացներում առաջնահերթություններից մեկը հարկային իրավունքի սուբյեկտների գործունեության արդյունավետության բարձրացումն է, հարկ վճարողների հետ հարաբերությունների ոլորտում հարկային ծառայողի դերի դրական ընկալման փոփոխությունը, հարկային պատշաճ քաղաքականություն վարելու սկզբունքի հիման վրա հարկային իրավունքի յուրաքանչյուր սուբյեկտի տեղի և դերի, իրավասուբյեկտության հստակ սահմանումը և այլն: Կարևորելով նշված և այլ խնդիրների ուսումնասիրությունը՝ հեղինակը սույն աշխատանքի շրջանակներում փորձել է իրականացնել հարկային ծառայության մարմինների և հարկ վճարողների իրավասուբյեկտության հիմնախնդիրների համալիր գիտագործնական հետազոտություն:

Թեկնածուական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, ինը ենթագլուխ պարունակող չորս գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի այսպիսի կառուցվածքը, ընդհանուր առմամբ, համահունչ է այն խնդիրներին ու նպատակներին, որոնք իր առջև դրել է հեղինակը:

Աշխատանքի ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության տեսական հիմունքները և թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը և խնդիրները, հետազոտության մեթոդաբանությունը և գիտական նորույթը, ինչպես նաև՝ պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության տեսական, գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը և ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Հարկային իրավունքի սուբյեկտները» վերտառությամբ գլխում հեղինակը ներկայացրել է հարկային իրավունքի սուբյեկտների ընդհանուր բնութագիրը և իրավասուբյեկտությունը՝ անդրադառնալով հարկային իրավահարաբերության հիմնական և ոչ հիմնական մասնակիցների կարգավիճակին և տեսակներին՝ հաշվի առնելով հարկային իրավասուբյեկտության ընդհանուր տեսական հասկացությունը և տարրերը:

Աշխատանքի երկրորդ գլխում, որը կրում է «Հարկային իրավունքի սուբյեկտների իրավական կարգավիճակը» խորագիրը, լուսաբանված է հարկ վճարողի իրավական կարգավիճակի ընդհանուր բնութագիրը՝ հարկային-իրավական հարաբերություններում տարանջատելով հարկ վճարող ֆիզիկական անձանց և կազմակերպություններին:

Ատենախոսության երրորդ՝ «Վարկային կազմակերպությունների գործակալների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները» գլխում հեղինակը ներկայացրել է հարկային գործակալների, վարկային կազմակերպությունների և բանկերի գործակալների իրավական կարգավիճակը, մեկնաբանել հարկային գործակալի ներակայացուցչական գործառույթը և անդրադարձել բանկային ու հարկային գաղտնիքի հիմնախնդիրներին:

«Հարկային վարչարարության դերը հարկային իրավունքի սուբյեկտների իրավական կարգավիճակի կանոնակարգման ոլորտում» խորագրով չորրորդ գլխում

հեղինակն իրականացրել է քննարկվող հիմնախնդրի վերլուծություն՝ անդրադառնալով հարկային վարչարարության կառուցակարգերին և դրանց իրավական բաղադրիչին, ինչպես նաև՝ հարկային վարչարարության կատարելագործման հիմնական ուղղություններին:

Ատենախոսության եզրափակիչ մասում շարադրված են հետազոտության կատարման արդյունքում հեղինակի կողմից արված եզրահանգումները:

Գիտական հետազոտության վերաբերյալ ընդհանուր դրական կարծիքի հետ մեկտեղ հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները՝

1. Թեև աշխատանքն աչքի է ընկնում գրագիտության ընդհանուր պատշաճ մակարդակով, այնուամենայնիվ, ատենախոսության մեջ նկատելի են նորմատիվ իրավական ակտերի տեքստերի բազմաթիվ ուղղակի մեջբերումներ: Վերջիններս, անշուշտ, ծառայում են հետազոտության խնդիրների լուծմանը, սակայն սահմանված ծավալի շրջանակներում հետազոտվող հիմնախնդիրների վերլուծական բաղադրիչի չափաբաժնի ավելացումը, մեր դիտարկմամբ, ավելի կբարձրացներ աշխատանքի գիտական արժեքը:

2. Գիտական նորույթի տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող առաջին դրույթը: Չթերագնահատելով ատենախոսի կողմից իրականացված հետազոտության արժեքը, այնուամենայնիվ, կարծում ենք, որ վերոհիշյալ մոտեցումը չի համապատասխանում պաշտպանության ներկայացվող դրույթին առաջադրվող պահանջներին: Պետք է նկատի ունենալ, որ առաջարկվող դրույթը, ըստ էության, տեղավորվում է «ՀՀ Հարկային օրենսգիրք» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 6-րդ կետերի, 4-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի, 226-րդ և 241-րդ հոդվածների տրամաբանության մեջ և չի պարունակում գիտական նորույթի էական տարրեր:

3. Թերի է ատենախոսության գրականության ցանկի ձևավորումը: Մասնավորապես, ատենախոսության՝ «Մասնագիտական գրականություն, մենագրություններ և դասագրքեր» բաժնում ներառված ոչ բոլոր աղբյուրների դեպքում են նշված դրանց հրատարակչության վերաբերյալ տվյալները::

Ներկայացված նկատառումները կրում են մասնավոր բնույթ և չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը, պայմանավորված են աշխատանքն առավել որակյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևություն. «Հարկային ծառայության մարմինների և հարկ վճարողների իրավասուբյեկտության հիմնախնդիրները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, որը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը՝ Թամարա Զավենի Գրիգորյանը, արժանի է իր կողմից հայցվող իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ,

բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ:

Առաջատար կազմակերպության կարծիքը Թամարա Զավենի Գրիգորյանի՝ «Հարկային ծառայության մարմինների և հարկ վճարողների իրավասուբյեկտության հիմնախնդիրները» խորագրով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ պատրաստվել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի պետի պարտականությունների կատարող, ոստիկանության փոխգնդապետ Ա. Գ. Սաֆարյանի կողմից:

Քննարկվել և հավանության է արժանացել պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի 2020 թ. դեկտեմբերի 28-ի նիստում, արձանագրություն թիվ 8:

Ամբիոնի պետի պարտականությունների կատարող,
ոստիկանության փոխգնդապետ Ա. Գ. Սաֆարյան

Ա. Գ. Սաֆարյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի
տեղակալ, ինքը և կադրերի և ԱՀՏԱ բաժնի պետ,
ոստիկանության գնդապետ Գ. Գ. Մալխասյան